

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 7 կոպեկով:

Փիֆիլիում գրվում են միակից խմբադրաման մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և ասն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են խւրաքանչիւր բառին 2 կոպեկի:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՈՆԻՆԻ

Մերայնի բայանդուրեանց, Սօֆիա Բարայեանց, Աննա Կուսիկեանց և Ստեփաննոս Բօրիսեանց խորին ցաւով յայտնելով՝ առաջին երեքը իրանց մօր, իսկ վերջինը իր քրոջ:

ՎԱՐՎԱՌԷ ԲԱՅԱՆԳՈՒՐԵԱՆՑԻ

մահը, ինքնուրմ են ազգականներին և բարեկամներին հինգշաբթի, ամիս 13-ին, շնորհ ընդհանուր յարգանքով յայտնելով, որ մահացողը, առաւօտեան 10 ժամին, սեփական տանը, Սերգէյեւիկայա փողոց № 14, կը տանվի Մոզնու ս. Գեորգէ կէղեցին, իսկ այգանդից, պատարագից յետոյ՝ խօշիկանքի գերեզմանատունը:

1—1

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Որ օրվայ համար է, Միւրթարական երեւոյթ.— Կեանքի ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գեորգ տարր. Ամուսնա- կան խնդիրներ. Նաւակ էջմիածնից. Ներքին լու- րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կանանց կոնգրէս Բերլինում. Պրոֆեսոր Լէյզն. Արտաքին լուրեր.— ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀՆԱԿՆԵՐԻՆԵՐ.—ԲՈՐՄԱ.—ՅԱՅ- ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սասուն.

միջ ոչինչ օգնութիւն չը ստանալով, ձեռ- քերը ծայած նստել է, և սպասում է մի աջող քամու, որպէս զի աղղային թաա- ռօնի ջախջախված նաւը բաց թողնէ դէպի ալեկոծ ծովը...

Որտեղից պէտք է մեզ այդ աջող քա- մին: Երևակայել, որ մի հայ դրամատէր այս տարի մի քանի հազար կը դնէ,—բա կէթէ չասնէք ցնորք, գէթ մեծ միամտու- լիւն կը լինի: Սպասել, որ մի հայ զգա- լով, որ իր վերջին րօպէսները հասել են, մի խոշոր դուրս կը կապէ հայոց թաա- ռօնի օգտին,—բա էլ երազ է, որովհետեւ հայը սովոր է փողեր կտակել աւերակ վանքերը նորոգելու, բայց թաաթօն պահե- լու՝ երբէք: Եւ վերջապէս յոյս ունենալ, որ դերասանները իրանք իրանց սեփական ոյժերով, առանց օտար աջակցութեան կար- ըրը են ընկերաբար միանալ և համե- րաշխուլթեամբ գործը առաջ տանել.—բա էլ թէև գեղեցիկ բայց անիրագործելի ցանկութիւն է, որովհետեւ համեմաշխու- լեան զաղապարը նոյնքան անձնագի է մեր գերասաններին, որքան և դրամական ապահովութեան զբաղմունքը...

Մնում է, որ զրպից մի պատահական օգնութիւն լինի, մնում է, որ դրամական կէթէ ոչ շատ մեծ, գէթ մի չափաւոր նը-

պաս տրվի, որպէս զի այս տարի մենք թաաթօնից դուրի չը մնանք և բաց անենք նրա փակված դռները: Մեր կարծիքով, իբրև այդպիսի դրամական նպաստ, կարող են ծառայել երկու գումարներ, որոնք հայոց թաաթօն անունով պահվում են, բայց չեն գործարկում: Կրանցից մէկը այն 1000 ռուբլին է, որ պահվում է հա- յոց Բարեգործական ընկերութեան կասա- յում, ահուհի անունով, իսկ միւսը այն 5,000 ռուբլին, որ բաղուցի երկուստարդ թաաթօնատէր Լայպանի ժառանգները ի յիշատակ նրա կտակել են հայոց բնին:

Այդ երկու գումարներն էլ պահվում են հայոց թաաթօնի անունով, երկուսն էլ արը- ված են թաաթօնի համար, բայց մնում են առանց գործարկութեան, որովհետեւ Թիֆ- լիսի-հայ հասարակութիւնը իրան սփո- փում է այն երկուստարդ յոյսով, թէ զեռ ոչը բացված թառամած՝ ահուհի երբ և իցէ պէտք է գոյութիւն ստանայ և հայոց թաաթօնը ծաղկեցնէ...

Ջարմանալի է հայը.—այս րօպէսի ժո- դովուրդը թաղված է ազիտութեան մէջ, իսկ հայը փողեր է կտակում, որ սրանից 50 տարի յետոյ զարոյցներ բացվեն: Այս րօպէսի ժողովրդին ուսում առած, կըրթ- ված մասնագէտներ են հարկաւոր, իսկ հայը փողեր է դնում բանկում, որ նրա տոկոսով սրանից երեսուն, քառասուն տա- րի յետոյ մարդիկ դնան ուսում առնելու: Այս րօպէսի սով կայ, ժողովուրդը տանջ- վում է, իսկ հայը իր փողերը բանկն է դնում, որ նրա տոկոսով զեռ հարկը տա- րուց յետոյ ժողովուրդին օգնեն, զարոյցներ բանան, զրբեր արարեն...

Նոյնն է և թաաթօնի գործուհի: Այս րօ- պէսի մենք թաաթօն չունենք, ժողովուրդը մայրենի լեզուով ներկայացումներ չէ տե- նում,—իսկ մենք փողերը բանկն ենք դնում, որ սրանից հինգ, տաս, քսան տարի յե-

տոյ, երբ մի ինչ որ ակումբ կը լինի՝ նա վերցնէ այդ գումարները և զործ դնէ յօ- զուս հայոց բնին...

Այս, միայն հայը կարող է այդպէս մը- տածել, միայն հայ կազմակերպ լրջիկան կա- ռող է այդպէս դասել.—առօրեայ ցաւերը, ժողովրդի այսօրվայ պէտքերը չը տեսնել, չը հոգալ, և միայն մտածել մի ինչ որ հեռու ապագայի մասին, մի ինչ որ ապա- զայ բարորութեան մասին...

Ապագայում ինքը ժողովուրդը գուցէ այնքան զարգայած, այնքան զուսակցական կը լինի, որ ինքը կարող է առանց բարե- բարներին, առանց ահուհիների, առանց մենտորների հոգալ իր պէտքերը, իր ցա- ւերը, իր կարիքները:

Եթէ օգնել կարող էք՝ այժմ օգնեցէք: Ե փոխանակ փողերը բանկերում պահելու, սուէք, որ թաաթօն ունենանք, որ մայրենի բնինց զրկված չը մնանք:

Ո՞ր օրվայ համար էք պահում:

ՄԻՒԹԱՐԱԿԱՆ ԵՐԵՒՆՑՈՒ

Մենք համոզված ենք, որ կաթողիկոսական նոր կոնգրէսը, որ տրված է Ներսիսեան զարոյցի հոգաբարձութեան, մեծ ուրախու- լիւն կը պատճառի մեր հասարակութեան: Այդ կոնգրէսով վարատվում են զանազան տեսակ կապակներ և սխալ ենթադրու- լիւններ, որ լսվում էին վերջին ժամա- նակներ զարոյցի վարչութեան իրաւունք- ների վերաբերութեամբ: Կաթողիկոսական կոնգրէսը որոշ է պարզ իրազով մատնանիչ է անում զարոյցի կանօնադրութեան վրա, ճանաչելով այդ կանօնադրութիւնը իբրև ղեկավարող հիմք՝ զարոյցական բո- լոր գործողութիւնների համար:

Նոյն իմաստով մի կոնգրէս մի քանի ժա- մանակ առաջ տուել է Վեհափառ Եւուր-

ՈՐ ՕՐՎԱՅ ՀԱՄԱՐ Է

Թաաթօնական սեղանը սկսված է, շուտով ձմեռն էլ կը հասնի, երբ երկար դի- շերներն անցկացնելու համար հասարա- կութիւնը, աւելի քան արդիւյթ ուրիշ եղանակներին, պահանջ է դրում թաաթօն յաճախելու:—Իսկ հայոց թաաթօնի դռնե- րը փակ են, և ինչպէս երևում է, հեշտու- թեամբ էլ չեն բացվելու:

Մի կարճատե փայլուն շրջան ունենա- ռուց յետոյ, Թիֆլիսի հայոց բնում վերջին տարիներս գոյութիւն ունեցաւ զլիսաւորա- պէս մասնաւոր անձանց դրամական նպաստների շնորհիւ: Այս տարի այդ նը- կասանները չը կան, քանի որ ոչ ոք ըրիսկ չէ անում ձեռնամուխ լինել այդ գործին, և այդպիսով դերասանական խումբը, զըր-

զաւանդեալ միասին մտաւորապէս կարող են լինել 4—5000 տուն հայ, տուն կայ սակայն, որ կարող է 17—20 անձ հրացան բաւող հանել: Հա- յերի տները քրեւորի պէս չեն, վերջիններս միա- սին ապրել չը դիտեն. եթէ մի տան մէջ հինգ եղբայր են, նրանք բաժանվում 5 տուն են կադ- մուս:

Բրդական ցեղերն են.

- 1) Բաքրանցիք, որոնք ձմեռը իջնում են Ներքին-Կապա կոչվող գաւառը (Տաւրիկի ձորի հարաւային մասը), իսկ ամառը բարձրանում են Ծառախու լեռներ վրա:
- 2) Բաղդէկանցիք, որոնք նոյնպէս ձմեռը Ներքին Կապա են իջնում և ամառը գալիս բըռ- նում են ս. Յովհաննու վանքի լեռները (Տաւու- ըրիկի հիւսիս-արեւմտեան կողմը), Մուշի դաշտի վերուստ:
- 3) Ուշկընցիներ, որոնք Ներքին Կապա են իջ- նում նոյնպէս և ամառը բնում են Սև սար կոչված անտառապատ լեռները.—Աղսրիկի մօտ, Պանաշէնի և Մշոյ դաշտի մէջտեղի տարբեր:
- 4) Բաւաքցիք, մի յոյանի ցեղ, որ բաժան- վում են երկուսի՝ շիկոտանցիք և բըղբըցիք, բնակ- վում են Խարդանում, վերին-Կապաում և Մարա- թովի լեռների մէջ: Այս մեծ ցեղը կազմված է ա- րար ասոմերից, խոսում է արաբերէն և մեծ րարեկամութիւն ունի հայերի հետ. քրեւորի միջից հայերի միակ օգնական զանակիցները նրանք են: Յաճախ դրանք միանում են հայերի հետ կառավարութեան դէմ, այնքան սիրալիր են, որ եթէ քսան անձի մէջ մի հայ մտնի, բոլորը որ եթէ քսան անձի մէջ գործ ունեցողները գիտեն և յիշում են այն բոլոր օգնութիւնները, որ ստացել են բայքցի երկու ցեղերից: Միւս քրեւորքը թշնամի են հայերին, քիչ բարեկամ են

և երբեմն միայն Սասունի և Սիւնիք քրեւորքը, մա- նաւանդ այն պայմանով, եթէ արտաստորդ կամ դէմ դնող սասունցի հայերը չընդունեն իրանց մէջ օտար հայեր:

Ամենից կատարի և հայերի թշնամի ցեղերն են բաղդկանցիք, ուշկընցիները և բաքրանցիք, ո- ռոնք զրբթէ միշտ կուսի մէջ են իրանց զրացի- ների հետ. աւաղակային և խաչնարած ժողովուրդ- ներ են դրանք, արեւմաբու և վայրենի:

Սասունում բացի վերոնշյալ բրդական ցեղերից, կան նաև Սիւնիքի մէջ խառն ցեղեր. խուլպում՝ Մուսաբեգի ձորոտներն են և Տաւուրիկի ձորիները: Արանք թշնամի ցեղեր են:

Այս բոլոր քրեւորքը միասին կարող են ար- տաղրել մօտ 4—5000 կաւոյներ հայերի դէմ, որոնք կարող են իրանց կողմից 6000 ունենալ և հեշտութեամբ ընկճել առաջիններին, եթէ կառա- վարութիւնը չը միջամտէ՝ օգնելով քրեւորին:

Հայաբնակ ամենազլաւար գաւառն է—Սասունի լեռների կենտրոնը և Սասունի էական մասը.—Բա- րալը, որ և կոչվում է Տաւուրիկ: Այս գաւառի հիւսիսից, Գոթի դեպի մօտից տարածվում է մի ձագարած և ձոր մինչև հարաւ. լայն բերանի լայնու- թիւնը մի ժամաչափ է, 5—6 վերստ, իսկ հիւսիսից հարաւ երկարութիւնը 2—3 օրվայ ճանապարհ. ներքին ձայրով նա հանդուս է Ներքին Կապա վրա, ձորի միջից, բոլորով Սև լեռներից, հոսում է մի գետ, յետոյ մեծանում է նա իր արեւելեան կողմից Մերզուրա տարից հոսող մի ուրիշ ջրով, կտրում է ամբողջ արարածութիւնը և դնում Ներ- քին Կապա, այնտեղ թափվում ֓արբի կա- մուրջի տակ մի մեծ ջրի մէջ:

Տաւուրիկի ձորը գեղածիճաղ, բաւական ծա- աղարկ մի տեղ է. ունի իր կրճերի վրա արե- լեան կողմում Տաւուրիկի 30 տուն, Հրդընք—40

տուն, Հարմանք—20 տուն, իսկ արեւելեան կող- մից՝ Գորխ—10 տուն, Տալիք—15 տուն, Հոս- նուս, Հարթը 20-ական տներ և այնուհետև դե- պի աւելի հիւսիս ձորաբերանում Ըսպղանկ, Սը- կարթ, Հիթնը, Գերմով և այլ բաղաձիւղ գիւ- ղեր, որոնք փակված են միմեանց ետևից դէպի Մշոյ դաշտն իջնող լեռնաշղթայի վրա:

Տաւուրիկ միայն կարող է տալ 500 պատե- րազմողներ: Այս գաւառից յետոյ, դուռ հայաբ- նակներ են՝ Ծառախ, որը կարող է տալ 1000 պատերազմող և որի զլիսաւոր գիւղն է Գէլիէ Գուզան, մօտ 120 տուն, յետոյ փասնաց գաւա- ւը իր Մշոյ գիւղով, որ կարող է հրացան վերց- նող հանել 350—400 անձից ոչ աւելի:

Ամբողջ Սասունի զիբը լեռնային է, դաշ- տային տեղեր քիչ կան, նրանք աւելի շատ են խուլ և Պանաշէն գաւառներում: Խու- լիք, որ Պանաշէնից երկու օրվայ ճանապարհ հե- առ է, ունի իր երկու կողմում բարձր անտառա- պատ լեռներ. անտառներում բուսում են եղևի, կաղնի, իսկ ստորին մասում կաղամախի ծառեր են, որ դերասներ են մտաակարարում շրջակայ բոլոր գաւառների շէնքերի համար: Այդ անտառները գրեթէ վայրենի են և անմարդաբնակ, լի վայրի կենդանիներով, նաև մի քանի քրեւոր շէյխերով, որոնք խորհրդաւոր կերպարանքի տակ մտնելու տառների խորբերը խուլի զաշտային տեղերում ցանկում են ցորեն, կորեկ, գարի և գլգլի:

Այդ գլգլի կոչվող հացահատիկն է ահա, որ կազմում է ամբողջ Սասունի հացը: Գա ու- պածն և նրա մեծութեամբ, տափակ, բայց սպի- տակ գոյնով հատիկ է, որ բուսում է մեծ առա- տուլթեամբ: Նրա բոյսը երկու մարդահասակ եր- կարութեամբ ցորուն ունի, որի հաստութիւնն է երեք մատ. ցորունի զլինի ողկոյզածն, ճիշդ եր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՍՍՈՒՆ

(Խանդավառական տեղեկութիւններ)

Սասունը, որ այժմ մեծ ուշադրութիւն է դը- րուել և որ այնքան քիչ է ուսումնասիրված, լեռ- նային մի ապաւանտ երկիր է:

Սասունի գաւառները ահա թէ որոնք են Ամենից վերև, այնտեղ, ուր միայն հայեր են բնակվում և որը զլիսաւոր կենտրոնն է, կոչ- վում է Բարակ. դա Տաւուրիկի ձորն է՝ նրա վերին մասը, որը իր կոործերի վրա ունի արե- լեան կողմում Գորխ, Տալիք, Հոսնուս և աւելի դէպի հիւսիս ձորից դուրս եկող Ըսպղանկ ու Սըկարթ աւանները:

Բարակից յետոյ Ծառախն է զլիսաւոր գա- ւառը. այդ Ծառախը Սասունի գաւառ է և ոչ թէ Ռշտունեաց երկրի Ծառախու գաւառը: Այդ գաւառի գրեւոր են՝ Կեղիէ-գուզան, Շէնիկ և Սե- վալ Գետայ գալիս են՝ Խուլ և Սիւնի, վերին- Կապա, Խարդանք, Պանաշէն, Բուեն Սասուն, Խուլ և Փասնաց գաւառները: Կրանք են ահա, որ Սասնոյ երկիրը ասովղ լեռ- նային աշխարհ են կազմում: Այս գաւառներից Բարակի և Ծառախի բնակիչները բոլորն էլ հայեր են, իսկ միւս գաւառներում կան և քրեւորքը: Վերին Կապաում՝ կէսը հայ, կէսը քրեւոր: Բուեն Սասուն—երկու մասը քրեւոր, մի մասը հայ, փասնաց գաւառում—հաւասար. Սիւնի աւելի շատ հայ, խուլ- պում հաւասար, Խարդանքում նոյնպէս: Բոլոր

գաւառներում միասին մտաւորապէս կարող են լինել 4—5000 տուն հայ, տուն կայ սակայն, որ կարող է 17—20 անձ հրացան բաւող հանել: Հա- յերի տները քրեւորի պէս չեն, վերջիններս միա- սին ապրել չը դիտեն. եթէ մի տան մէջ հինգ եղբայր են, նրանք բաժանվում 5 տուն են կադ- մուս:

Բրդական ցեղերն են.

- 1) Բաքրանցիք, որոնք ձմեռը իջնում են Ներքին-Կապա կոչվող գաւառը (Տաւուրիկի ձորի հարաւային մասը), իսկ ամառը բարձրանում են Ծառախու լեռներ վրա:
- 2) Բաղդէկանցիք, որոնք նոյնպէս ձմեռը Ներքին Կապա են իջնում և ամառը գալիս բըռ- նում են ս. Յովհաննու վանքի լեռները (Տաւու- ըրիկի հիւսիս-արեւմտեան կողմը), Մուշի դաշտի վերուստ:
- 3) Ուշկընցիներ, որոնք Ներքին Կապա են իջ- նում նոյնպէս և ամառը բնում են Սև սար կոչված անտառապատ լեռները.—Աղսրիկի մօտ, Պանաշէնի և Մշոյ դաշտի մէջտեղի տարբեր:
- 4) Բաւաքցիք, մի յոյանի ցեղ, որ բաժան- վում են երկուսի՝ շիկոտանցիք և բըղբըցիք, բնակ- վում են Խարդանում, վերին-Կապաում և Մարա- թովի լեռների մէջ: Այս մեծ ցեղը կազմված է ա- րար ասոմերից, խոսում է արաբերէն և մեծ րարեկամութիւն ունի հայերի հետ. քրեւորի միջից հայերի միակ օգնական զանակիցները նրանք են: Յաճախ դրանք միանում են հայերի հետ կառավարութեան դէմ, այնքան սիրալիր են, որ եթէ քսան անձի մէջ մի հայ մտնի, բոլորը որ եթէ քսան անձի մէջ գործ ունեցողները գիտեն և յիշում են այն բոլոր օգնութիւնները, որ ստացել են բայքցի երկու ցեղերից: Միւս քրեւորքը թշնամի են հայերին, քիչ բարեկամ են

և երբեմն միայն Սասունի և Սիւնիք քրեւորքը, մա- նաւանդ այն պայմանով, եթէ արտաստորդ կամ դէմ դնող սասունցի հայերը չընդունեն իրանց մէջ օտար հայեր:

Ամենից կատարի և հայերի թշնամի ցեղերն են բաղդկանցիք, ուշկընցիները և բաքրանցիք, ո- ռոնք զրբթէ միշտ կուսի մէջ են իրանց զրացի- ների հետ. աւաղակային և խաչնարած ժողովուրդ- ներ են դրանք, արեւմաբու և վայրենի:

Սասունում բացի վերոնշյալ բրդական ցեղերից, կան նաև Սիւնիքի մէջ խառն ցեղեր. խուլպում՝ Մուսաբեգի ձորոտներն են և Տաւուրիկի ձորիները: Արանք թշնամի ցեղեր են:

Այս բոլոր քրեւորքը միասին կարող են ար- տաղրել մօտ 4—5000 կաւոյներ հայերի դէմ, որոնք կարող են իրանց կողմից 6000 ունենալ և հեշտութեամբ ընկճել առաջիններին, եթէ կառա- վարութիւնը չը միջամտէ՝ օգնելով քրեւորին:

Հայաբնակ ամենազլաւար գաւառն է—Սասունի լեռների կենտրոնը և Սասունի էական մասը.—Բա- րալը, որ և կոչվում է Տաւուրիկ: Այս գաւառի հիւսիսից, Գոթի դեպի մօտից տարածվում է մի ձագարած և ձոր մինչև հարաւ. լայն բերանի լայնու- թիւնը մի ժամաչափ է, 5—6 վերստ, իսկ հիւսիսից հարաւ երկարութիւնը 2—3 օրվայ ճանապարհ. ներքին ձայրով նա հանդուս է Ներքին Կապա վրա, ձորի միջից, բոլորով Սև լեռներից, հոսում է մի գետ, յետոյ մեծանում է նա իր արեւելեան կողմից Մերզուրա տարից հոսող մի ուրիշ ջրով, կտրում է ամբողջ արարածութիւնը և դնում Ներ- քին Կապա, այնտեղ թափվում ֓արբի կա- մուրջի տակ մի մեծ ջրի մէջ:

Տաւուրիկի ձորը գեղածիճաղ, բաւական ծա- աղարկ մի տեղ է. ունի իր կրճերի վրա արե- լեան կողմում Տաւուրիկի 30 տուն, Հրդընք—40

տուն, Հարմանք—20 տուն, իսկ արեւելեան կող- մից՝ Գորխ—10 տուն, Տալիք—15 տուն, Հոս- նուս, Հարթը 20-ական տներ և այնուհետև դե- պի աւելի հիւսիս ձորաբերանում Ըսպղանկ, Սը- կարթ, Հիթնը, Գերմով և այլ բաղաձիւղ գիւ- ղեր, որոնք փակված են միմեանց ետևից դէպի Մշոյ դաշտն իջնող լեռնաշղթայի վրա:

Տաւուրիկ միայն կարող է տալ 500 պատե- րազմողներ: Այս գաւառից յետոյ, դուռ հայաբ- նակներ են՝ Ծառախ, որը կարող է տալ 1000 պատերազմող և որի զլիսաւոր գիւղն է Գէլիէ Գուզան, մօտ 120 տուն, յետոյ փասնաց գաւա- ւը իր Մշոյ գիւղով, որ կարող է հրացան վերց- նող հանել 350—400 անձից ոչ աւելի:

Ամբողջ Սասունի զիբը լեռնային է, դաշ- տային տեղեր քիչ կան, նրանք աւելի շատ են խուլ և Պանաշէն գաւառներում: Խու- լիք, որ Պանաշէնից երկու օրվայ ճանապարհ հե- առ է, ունի իր երկու կողմում բարձր անտառա- պատ լեռներ. անտառներում բուսում են եղևի, կաղնի, իսկ ստորին մասում կաղամախի ծառեր են, որ դերասներ են մտաակարարում շրջակայ բոլոր գաւառների շէնքերի համար: Այդ անտառները գրեթէ վայրենի են և անմարդաբնակ, լի վայրի կենդանիներով, նաև մի քանի քրեւոր շէյխերով, որոնք խորհրդաւոր կերպարանքի տակ մտնելու տառների խորբերը խուլի զաշտային տեղերում ցանկում են ցորեն, կորեկ, գարի և գլգլի:

Այդ գլգլի կոչվող հացահատիկն է ահա, որ կազմում է ամբողջ Սասունի հացը: Գա ու- պածն և նրա մեծութեամբ, տափակ, բայց սպի- տակ գոյնով հատիկ է, որ բուսում է մեծ առա- տուլթեամբ: Նրա բոյսը երկու մարդահասակ եր- կարութեամբ ցորուն ունի, որի հաստութիւնն է երեք մատ. ցորունի զլինի ողկոյզածն, ճիշդ եր-

Թեմական դպրոցի հոգաբարձութեան, մատնացոյց անելով կանօնադրութեան նախնային անհրաժեշտ արձանագրութեան հետեւ:

Անօնադրութեան իմաստով գործելու հրահրելը հանցաբարձուք մեր հասարակութեան յուզման մտքերը:

Այդ բոլորի մէջ մի երևոյթ շատ մտիթարական է: Այդ այն է, որ հասարակութեան մէջ նկատուած է որոշ ձգտում դէպի օրինականութիւն, մաքրում կամայականութեան, պատեհականութեան և անորոշութեան դէմ:

Յիրաւի մի քանի տարիներ առաջ մեր զանազան հիմնարկութիւնների ղեկավարները պարզ չէին ըմբռնում հաստատ սխառտի, որոշ կարգ ու կանօնի անհրաժեշտութիւնը և շատ անգամ նոյն իսկ առանց որ և է չար ղեկավարների, շեղուած էին այս ու այն կողմ: Նրանք ամենեւին չէին կարողանալ, եթէ նրանց յիշեցնէին, թէ չը պէտք է շեղուի կանօնադրութիւնից: Իսկ այժմ դա միայն ուրախացնում է, որ միայն որոշ սկզբունքներ, որոշ կարգ է կանօն ձանաչելով, կարելի է աշղոռթկամբ առաջ վարել հասարակական գործը: Որ կանօնադրութեան, քանահամարձակութեան վրա հիմնւած գործարարութիւնը կը հասցնի մեծ չարքիներ և սխալներ:

Անկատարձ կանօնի առաջադիմութեան և նոր պահանջների հետ միասին կարիք կը զգացիլ եղած կանօնները և հրահանգները փոխելու և կատարելագործելու: Բայց քանի չէ ճշգրտութեամբ նոր, քանի չէ հրահանգարարութեամբ նոր և աւելի լաւ կանօն, անպատճառ, ղեկավարողը պէտք է լինի գոյութիւն ունեցող կանօնը:

Կրկնում ենք, ներկայումս մեր հասարակութեան մէջ նկատուող ձգտումը դէպի օրինականութիւն, դէպի սկզբունքներ և հիմնական կէտեր ձանաչելը, միթարական երևոյթ է և առաջադիմութեան մի նշան:

Ահա հէնց այդ տեսակետից էր, որ մեր հասարակութեան մի մասը մի քանի ամիս արանց առաջ դիմեց Վեհափառին, և մի մեծ գեկուցադիր ներկայացնելով այն կարծիքը յայտնեց, թէ անհրաժեշտ է մեր բոլոր հիմնարկութիւններին մէջ որոշ

սխալմ մտցնել, որոշ կարգ և կանօն հաստատել:

Առանց որոշ կանօնների, առանց որոշ սխալների, մեր բոլոր հիմնարկութիւնների մէջ անպակաս կը լինեն խառնակութիւնները, թիրիմացութիւնները, անսխալութիւնները, որոնք այժմ ամեն քայլափոխում պատահում են և մեծ վնասներ առաջանում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԻՒՐԳ ՏԱՐԻՐ

Քրդական ցեղերը, որոնք բռնել են Հայաստանի լեռնային մասերը, իրանցից ներկայացնում են մի հակակուլտուրական, խաղաղ և աշխատասէր ազգաբնակչութեան թշնամի մի տարր, որ անպակաս արգելքներ է դնում ժողովրդի խաղաղ զարգացման գործի առաջ, որ միշտ երկիրը պահում է պատերազմական դրութեան մէջ:

Քիւրդը անվեհեր է. նա երկիրը չը գիտէ, երբ ձեռքին գէջը ունի, արիւն թափելը նրա պարտաւոր է, իսկ այդ, թալանել, սպանել, կողոպտել, աղէկ փախցնելը նրա սիրած պարագայն է. նրա քաղաքները, նրա պատիւը, Հայաստանի գեղեցիկ լեռների լանջերը վրա քերտը նստն է մի առապակեական ոյժի, որից դուրս է ոչ թէ միայն խաղաղ աշխատասէր, երկրագործ հայը, ոչ թէ միայն յոյն վաճառականը, այլ նոյն իսկ զինուորակազմ թիւրք զինուոր, թիւրք պաշտօնեան, մինչև իսկ վալիս...:

Այժման այդ վայրերի հրոսակները, որ մեծ մասամբ հայկական ծագում ունեն և երբեմն նոյն իսկ քրիստոնէութիւն էին դառնում, իրանց գոյութիւնը պահպանելու, իրանց սպորտը հայրենիքի համար փոխելու իրանց կրօնը, և թողնելով խոյն ու գուլթանը, դաշտն ու արտը ապակենցին էրդուսի, Վապուրականի, Կիար-բեքերի լեռները, և սկսեցին ապրել ժողովրդի հաշուով...:

Եւ ահա այսօր էլ այդ ցեղերն են, որոնք ամբողջ երկիրը պահում են պատերազմական դրութեան մէջ. թոյլ չեն տալիս, որ երկիրը մէջ գէթ մի քանի տարի միմեանց վրա տիրապետի հանրապետութիւն և ազատութիւն. թոյլ չեն տալիս, որ երկրագործը վայելի իր աշխատանքի հարկ պատուը. անպակաս և ամեն տեղ առաջ բերելով աւերմունք, յախշակութիւն, սպանութիւններ...:

Քիւրդը տարրը, ճշմարիտ է, զօրեղացել է, յանա-

ղինացել է, ըստ այդ դեռ չէ նշանակում, որ նրան անկարելի է ընկնել, անկարելի է զինարարի անել: Եթէ նոյն իսկ թիւրք կառավարութիւնը ցանկանայ այդ կարող է անել:

Բաւական է միայն, որ թիւրքաց կառավարութիւնը բացարձակ կերպով ցանկանայ, որ վերջ տրվեն քիւրդական ճնշումներին, այն ժամանակ ինքը ժողովուրդը կը կարողանայ իրան պաշտպանել, և քիւրդ տարրը ընդ միշտ կը դապվի:

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Արդէն հարողեցինք, որ այս օրերս լոյս տեսաւ մի նոր գիրք «Ամուսնական տարակուսանքներ» անունով, հեղինակութիւն Գաբրիել Արաբեթիանի, և խոստացանք մի առանձին յօդուած նուիրել այդ գրքին:

Մենք հարկաւոր ենք համարում կանգ առնել «Ամուսնական տարակուսանքների» վրա, մանաւանդ այն պատճառով, որ նա վերաբերում է մի շատ կենսական հարցի և փորձ է անում լրջօրէն, անպատասխան, միայն պատմական փաստերի և լօգիկական եզրակացութիւնների հիման վրա՝ քննադատել իր առաջ դրած խնդիրը, մի խնդիր, որ աշխատում էին աշխատող դատարարախոս և անչնորք քննադատները: Եւ այդ փորձը աշողվել է հեղինակին:

«Ամուսնական տարակուսանքներ» գրված է Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի մի քանի տարի առաջ լոյս ընծայած «Ամուսնական խնդիրներ» անունով գրքի և նրա դէմ եղած յարձակումների ու quasi քննադատութեան առիթով: Ինչպէս յայտնի է, Սեդրակեան եպիսկոպոսի գրքի քննիչ դուրս եկաւ բժիշկ Արամեան, իրան արժանի մի թիւրքի մէջ, և այնպիսի մի հեղինակաւոր անձնու, այնպիսի ձևերով, որ միամիտները կարող էին մի բոլոր երևակայել, թէ Սեդրակեանը բժիշկը՝ Գերամանյանը ամենաընտիր աստուածաբանական դպրոցներից մինի վկայակ կանդիդատ է կամ կանօնիկոս:

«Ամուսնական տարակուսանքների» հեղինակի քննադատութիւնը անհերքելի կերպով ապացուցանում է այն իրողութիւնը, որ բժիշկ Արամեանի այդ կրքում, անհիմն, միակողմանի քննադատութիւնը գուրկ է որ և է դրականական արժեքից, որ նա բոլորովին բռնի է եկեղեցական իրաւաբանութեան և աստուածաբանական դատութեան մէջ, և միայն մարդկային յանդիմութեան մէջ պէտք է որոնել այնպիսի մի երևոյթի պատ-

ձառը, երբ «Կոչակաբար յանձն է առնում խոհարարի պաշտօն կատարելը»:

Ճիշդ է, «Ամուսնական տարակուսանքներից» երևում է, որ Սեդրակեան եպիսկոպոսը մի քանի հարցերի պատճառաբանութեան մէջ ըստ ամենայն կոմպետենտ չէ, բայց հաստատվում է և այն իրողութիւնը, որ ընդհանրապէս Արիստակէս եպիսկոպոսը շատ ճիշդ ըմբռնել է լուսաբանել է իր շօշափած խնդիրը, և նրա դրած թէղիները միանգամայն համաձայն են ժամանակակից կանօնադատութեան (каноническое право) հիմունքներին, այնպէս որ Արիստակէս եպիսկոպոսը հանդիսանում է ոչ թէ մի նոր մտքի, գաղափարի և վարչակազմութեան քարոզիչ, այլ միայն կրկնում է այն, ինչ որ եկեղեցական իրաւաբանութիւնը և կանօնական իրաւունքը վաղուց քարոզել և վարչակազմել են, ինչ որ առանցում է հայոց եկեղեցու պատմութիւնը:

Ինքնուրուիք անկասկած գիտենք, որ «Ամուսնական խնդիրներ» գրքի հեղինակը, հիմնվելով եկեղեցական ժողովների հաստատած կանօնների և եկեղեցու հայրերի դրուածներին իմաստի վրա, եկել էր այն եզրակացութեան, թէ հայոց եկեղեցին իր ամբողջ գոյութեան ընթացքում ընդունել է ամուսնալուծութեան օրէնքը, ուստի և այն կարծիքը, թէ՛ պսակը անլուծելի է հայոց եկեղեցու կանօններով, միանգամայն դուրկ է պատմական և իրաւաբանական հիմքեր:

Բացի դրանից, Սեդրակեան եպիսկոպոսը հաստատելով զբաղմունք օրինակներով և այն անհերքելի իրողութիւնը, թէ ներկայումս եկեղեցական ժողովներից հաստատված կանօնները ամուսնալուծութեան և հաս ու չ հաս ի խնդիրների վերաբերմամբ պրակտիկայի մէջ բոլորովին աղաւաղվել, յեղաշրջվել են և մեծ զեղծումներ կրում են բացել, ցանկութիւն կը յայտնում, որ այդ զեղծումների առաջին առնվել էր կամայականութեամբ վերացվել մեր հողերը առանձիններից. իսկ այդ նախապէս էր համարում միայն այն ժամանակ, երբ կը կազմվել մի ընդհանուր հրահանգ, մի ընդհանուր կանօնադր՝ գործարարութեան համար: Իսկ կանօնադրը կազմելը դժուար չէ, քանի որ կան եկեղեցական ժողովներից հաստատված և նուիրագործված կանօններ:

Եւ ահա մի այդպիսի օգտակար առաջարկութիւն, մի այդպիսի համակրելի միտք, որ Արիստակէս եպիսկոպոսից առաջ արտայայտել էին և ուրիշները և նոյն իսկ մեր մամուլը, փոխանակ լուրջ քննադատութեան, մի «անհրաժեշտ երևումական» առաջ բերեց, ինչպէս նկատում է Գաբ-

կար սիրուն սեխը մեծութեամբ և ձեռով գլխի վայր կտրված է հասկը: Իւրաքանչիւր հասկ տալիս է 3—4 գուլթի չափով հատիկ:

Գրքիւր աղում են ջրաղացներում, ալիւրից կար հացեր շինում և թխում են ցածկեղ, առջեկից բաց բերանով թոնիրներին մէջ, որոնց տեղացիք թ վէ կ են անուանում: Բացի գրքիւր հացից գործ են անում նաև կորեկի և երբեմն էլ ցորենի հաց, երբ սասունցիներին փոխվում է դաշտերն իջնելու՝ իրանց երկրի բերքը ցորենի հետ փոխելու համար: Գրքիւր ցանում են ամեն տեղ, նոյն իսկ Տաւրոսի ձորում և լեռներին միջի այն ամեն տափարակների վրա, ուր կայ մի քիչ հող: Հողը հերկվում է շատ հեշտութեամբ, վերին աստիճանի բերդուակող է, իսկ գրքիւր հասկերը կատարելապէս արտադրում են հոգաբարձուք: 4 կե—երկու գոյգ—բաւականաւոր է վարելու համար մի գրքի բոլոր արտերը: մի լուծ էլ է, որ գրքիւր է շարժում: Վերին Սասունում, Քարակի փայտոտ մասերում, ուր կան հողեր, հողոտ տափարակներ, պատահում են երբեմն այնպիսի կատաստրոֆներ, որ գրքացիք տանվում են սաստիկ, մինչև որ կարողանում են վնասների տեղը լցնել: Մի անձրև կամ մի ջրի հոսանք լուսնում տանում է հողային շերտը և երևան հանում ժայռոտ մասը. այն ժամանակ գրքացիք ստիպվում է մէջքին առնել այժմ մորթիլ բարձր կը կողովում հող կրել ու լցնել այնտեղ, կարողանալու համար գրքի կամ այլ հացատեղի ցանելու: Հողը այնքան բերդուակող է, որ 5—6 սամէնաչափ տարածութեամբ տափարակի գրքիւր և բերքը կերակրում է մի ամբողջ տուն ձմեռվայ ամիսներում:

Բուսականութիւնը և առհասարակ բուսական բերքը հարուստ են Սասունի մէջ: Անտառներ վերեւում չը կան, բայց կան պրակներ անապատաւու ծառերի, որոնց տերևները գոնէ օգուտ են

տալիս. տեղացիները կտրում են այդ ծառերի ճիւղերը, դարում մարագում իրանց տերևներով և ձմեռվայ ամիսներում իբրև խոտ անում են ոչ խաղերի առջև, մերկացած ճիւղերն էլ վառելիք են անում:

Պողտու ծառեր ևս շատ կան. ընկուղենիները առատ են վերին-կավառում, Շաստիւում և նոյն իսկ Տաւրոսի ձորում: Կան խնձորենիներ ևս. ամեն նազոտակոտ պտուղներն են այժմ, Սասունի պաշարված դրութեան ժամանակ, պահպանում է լեռների քաղցրի կեանքը, սխտուակափ փոքրիկ կըլոր պտուղ է, որ հասունացած ժամանակ դեղնում է. ունի մեծ կորիզ, ուտվում է նաև կորիզով միտոնք: Սասունցիները ծնծում են նրան, խմոր շինում փոխիդի պէս և ուտում: Այդ պղտուղը ծանօթ է նաև կովկասցիներին և Իւր. Եւր. ամուսնով: Պղինձից յետոյ, նրա մի տեսակին է մրկիթը, որի պտուղը տափակ է և սև: Նրանից ձէթ են հանում կերակրի համար: Նրանում են, խմոր շինում և քամում: Գուրս եկած ձէթից սապոն էլ են շինում տեղացիք:

Այդ բերքերի հետ կայ նաև մեծ քանակութեամբ շատ ընտիր խաղող բոլոր գուառներում, մանաւանդ Տաւրոսի ձորում: Վերին Կավառի մէջ խաղողը վայրենի է, որ բուսում է ինքն իրան և բարձրանում փաթաթվում է ընկուղենիներին: Իսկ Տաւրոսի ձորի գրքիւր խաղողները նշանաւոր են իրանց ողկոյզերի մեծութեամբ: Խաղողից շինում են լաւ գինի, մանաւանդ փսանաց գաւառում:

Մտերի մէջ կան նաև թթիւներ, սալոր, ալոչ և այլն: Եթէ լեռնցիները պաշարված դրութեան մէջ չեն լինում, պտուղները իջեցնում են դաշտը և այնտեղ փոխում ցորենի և այլ բերքերի հետ: Բանջարեղեններ ևս շատ առատ են. չրջակայ

բոլոր լեռները լի են զանազան տեսակ բանջարներով. նուրիկ, մանրակ, փնգա, օղէն, պրիս, շրթուակ, աւելուկ, սիբեղ և այլն կազմում են սասունցիների կերակրութեան ամենահամեղ համեմունքը. իսկ ին (կանգառնած և մի բոյս), որի արմատն ու բունն էլ ուտվում է, բուսում է առատութեամբ, որպէս և խաւրժի կոչվող թրթուրը: Թրթուրը Նշանաւոր ուտելիք են անապիւն մեծութեամբ ստնկերը, որոնք բուսում են բաց ին (պրիսաձ և մի բոյս) անձրեկից փոսած արմատի վրա: Բերքերի մէջ նշանաւոր է մեղրը, որ մեծ առատութեամբ արտադրում է Սասունը. լեռների հարկաւոր տեսակ ծաղիկները կարողանում են նրիթ տալ մեղրուներին:

Երկրագործութեան համար, ինչպէս ասեցինք, գործ են անում եղ, բայց սասունցիք պահում են նաև ոչխար և կով. իբրև գրաստներ ունեն միլիոն էլ և ջորի. ձի բոլորովին չեն գործածում: Սասունի լեռների և անտառների մէջ կան շատ տեսակ վայրենի կենդանիներ. պատմում են, որ մինչև իսկ ինձի են հանդիպել: Գայլ, աղուէս, բորենի, վարազ և այլն լի են և որսի կենդանիներ են համարվում:

Ժողովուրդը ուրեմն պարագում է կիսովին երկրագործութեամբ, խաշարածութեամբ և մեղուաբուծութեամբ:

Միմիայն Տաւրոսի հայ բնակիչներն են, որոնք պարագում են նաև ուրիշ բանով: Այդ լեռների մէջ կան առատ և լաւ երկաթի հանքեր, երկաթ, որ առանց պողպատի է գործածվում և որից շինում են ամեն տեսակ գործիքներ: Այդ ամբողջ գաւառը—Քարակի բոլոր գրքերը զբաղվում են մեծ մասամբ երկաթահանութեամբ և նրանով մեծ առևտուր են անում, եթէ աշողվում է նրանց իջնել դաշտը և եթէ պաշարված դրութեան մէջ չեն: Այժմ, երբ երկիրը պարզել

է ապստամբութեան դրօշակը, բոլոր գործերը բարձի թողի են եղել և ժողովուրդը ոչ մի յարաբերութեան մէջ չը գտնվելով դրսի աշխարհի հետ, գրեթէ սոված է մնացել, առևտուրը դադարել է, եղած պաշարը սպառվել և սովը ըսկում է Երիւրայտեղ—վերեւում, ուր մարդ ու կին, զինված՝ վճռել են մեռնել, քան անձնատուր լինել:

Արդէն Սասունի ձմեռը վրա հասաւ, ուրիշ ձմեռ գրեզացիք զբաղվում էին կտաւ և այլ հագուստեղէն գործելով իրանց համար, իսկ այժմ նրանք հակում են որպէս զի թշնամին ոտ չը կոխի լեռներում և ինչ իրանց աղատութիւնը:

Ամառը Սասունում հով է և ակտիվ. ձուլ բուսականութիւն, առատ ջուր, սքանչելի բնութիւն, ծաղկալից և հոտ բուրոզ քարոտ բույրներ, սակաւ բայց զմայլելի մարգեր, ծառազարդ ձորեր և ծործորներ... իսկ ձմեռը, որ սկսվում է նոյններեկից և տևում մինչև ապրիլ ամիսը, խրատաշունչ է և սասունցիները: Մեծ քանակութեամբ ձիւն է գալիս, սառում են բոլոր ջրերը և ձիւնով ծածկվում մեծամեծ լեռները: Այդ ձիւնի առատութիւնը օգտակաւ է լինում նրանով էլ, որ գրքացիք լծում են իրանց բախիթները և դ՛հ ու կն երն ու դնում են անտառներից ցած բերելու աշան կտրտած ու գիլած տերևալից ճիւղերը: Աշան անհար է ներքե բերել նրանց, որովհետև գրեթէ անկանելի լեռներ են եղների և սայլի համար, բայց ձմեռը ինքը գրքացիքն տանում է դ՛հ ու կը դէպի վեր, բառնում է նրա վրա ձիւնը, յետոյ ինքն էլ լծվում և այդպէս տեղ հասցնում:

Այդ երկու տեսակ սասունցիները նրանք գործ են անում տեղափոխութեան համար, իսկ իրանց քայլու համար նրանք ստերին են կպում լաքան կոչվող մի տեսակ ձուած և տա-

ԲԱՌՈՒՄԻՑ մեզ գրում են. «Այն 16 ձեռքարկածով թիւրքահայտանցի մշակները, որոնց մասին հաղորդեցինք «Մշակի» № 111-ի մէջ, շարունակաբար թուրքահայտանցի, որին այդ մասին հետագայում մի խնդիր էր ուղարկված, արդէն աղաղակ են»:

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆԱՆՑ ԿՈՆԳՐԵՍՔ ԲԵՐԼԻՆՈՒՄ

Հոկտեմբերի 15-ին (նոր տօմարով) Բերլինում կը բացվի կանանց կոնգրէսը, որ հրահրել է իրական կրթութեան վերանորոգութեան Բերլինի ընկերութիւնը: Այդ կոնգրէսին մասնակցելու համար հաւաքվել են Բերլինում կանանց շարժման ներկայացուցչուհիները Գերմանիայի ամեն ծայրերից: Կոնգրէսի նիստերը կը սկսվեն հոկտեմբերի 15-ից և կաւարտվեն հոկտեմբերի 17-ին: Բերլինի քաղաքային վարչութիւնը տուն է կանանց կոնգրէսի նիստերի համար իր դահլիճը:

Կանանց այդ շարժման գլխաւոր նպատակն է՝ հարաւորութիւն տալ կանանց գիմնադրական լիակատար կրթութիւն ստանալու, արական գիմնադրանքի պրոպագանդա Գերմանական կանանց ձգտումներին համակրութեամբ վերաբերվելն ինքն արտասական կառավարութիւնը և ինքն Գերմանիայի զննակցական մի քանի ուրիշ պետութիւնները: Այժմ Բերլինում և Լէյպցիգում արդէն կան իրական գիմնադրանք, իսկ Կարլսբադում բացվեց գերմանական առաջին իրական գիմնադրանք:

Կանանց կոնգրէսը նպատակ ունի քննութեան առնել այն միջոցները, որոնց օգնութեամբ իրական գիմնադրանք կարելի կը լինի հիմնել աւելի ընդարձակ ծաւալով:

ՊՐՕՖԷՍՐ ԼԵՅՆԷ

Նորին կայսերական Մեծութիւն թագաւոր Կայսրին բժշկոգնիւնը մէկը յայտնի կլինիցես և Բերլինի համալսարանի պրոֆէսոր Լէյպչէն է: Բերլինի լրագրողները հետեւալ կենսագրական տեղեկութիւններ են հաղորդում այդ նշանաւոր մասնագէտի մասին:

Պրոֆէսոր Լէյպչէն ծնվել է 1832 թ-ի ապրիլի 20-ին: Գեո. շատ երիտասարդ հասակում նա ներքին հիւանդութիւնների նշանաւոր մասնագէտի համար վաստակեց. 33 տարեկան հասակում Լէյպչէն հրահրեց Կենդանութեան համալսարանը որպէս ներքին հիւանդութիւնների պրոֆէսոր: Այնտեղ նա մնաց 1865 թ-ից մինչև 1872 թ-ը, երբ հրահրեց Մտաբարձր: Չորս տարուց յետոյ, 1876 թ-ին, Լէյպչէն հրահրեց Բերլինի համալսարանը թերապիայի ամբիօնը գրաւելու, Տրուրէ պրոֆէսորի տեղը:

Պրոֆէսոր Լէյպչէն մասնագէտ չէ համարվում միայն ներքին հիւանդութիւնների մի որ և է ճիւղում, այլ նա մասնագէտ է սրտի, ջղային սխտանի, երկկամուճի և այլ հիւանդութիւնների Լէյպչէնի զիտիւնը կլասիկական է համարվում:

Որպէս մարդ պրոֆէսոր Լէյպչէն չարազանց ուշադիր և սիրալիր բժշկի համար ունի: Նա մեծ պրակտիկ ունի, և նրա խորհրդին են դիմում հիւանդները աշխարհի զանազան ծայրերից: Պրոֆէսոր Լէյպչէնի գիտնական աշխատութիւնների մեծ մասը նուիրված է երկկամուճի հիւանդութիւններին: Բժշկական գիտութիւնների այդ ճիւղում պրոֆէսոր Լէյպչէնը ըստ բժշկները աւտօրիտետ են համարում:

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

Կամպանիան զիւղի բնակիչները, խաւիտաւոր, խաւիտական լրագրողներ խոսքով, ամբողջապէս Բրազիլիա գաղթեցին, և զիւղը ներկայումս ոչ մէկ բնակիչ չունի:

Թէ՛հրանից լրագրողներին հեռագրում են հոկտեմբերի 2-ից հետեւեալը. «Աղա-չէյխ-Նեւասաֆիի մօլլան, որը երկու տարի առաջ արգելեց աղղաբնակութեանը պետական մասնակցութեան ծխախոտ առնել, իսկ զիւղայիններին՝ ծխախոտ ցանել, այժմ ուրաքան որքան Նրա բացակայութեան ժամանակ նախնապաշտը վերացրեց շէյխի մտքած ըստը սահմանափակումները: Այդ երկու տարվա ընթացքում, շէյխի հրամանի շարժում, շատ պակասեցին զանազանի եկամուտը»:

ները և զիւղայինները մեծ կորուստներ կրեցին»:
— Հոսովից մայրաքաղաքի լրագրողներին հեռագրում են, որ պապի արտաքին գործերի մինիստրը զիմեց կ. Պօլիս՝ միջնորդելով թող տալ հայոց պատրիարքին մասնակցելու Հոսովի կոնֆէրենցիային:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս Լոնդոնում վախճանվեց, 92 տարեկան հասակում, պարլամենտական յայտնի գործիչ Լորդ Գրէյ, որը մի ժամանակ աշխի ընկնող ղեր էր խաղում, որպէս յորդերի ժողովի անդամ և գաղթականութեան մինիստր: Լորդ Գրէյ հին ձեռք վիզ էր. 1882 թ-ից նա հեռացաւ արտասահման կուսակցութիւնից հօմբուլի պատճառով և այն ժամանակից յայտնի է որպէս Գլազգոսի նախաւորը:

Էլմիստինի ճեմարանի մասին սկսել են լրկումներ տպագրել տալ. — դա լաւ նշան է:
Ով իրան արդարացեալ է՝ մեղադրում է, ասում է Ֆրանսիական առածը:
Ամենալաւ բեկումը՝ գործը պէտք է լինի:

Հայոց գրողների և մանկավարժների վերջին ժողովում՝ ամենատար վիճարարութեան նիւթը այն էր, թէ արդե՞ք երաշխաւորութեան մասին փող տալ, թէ առանց երաշխաւորութեան:

Պատկերը հետաքրքրական էր:
— Առանց երաշխաւորութեան, առանց երաշխաւորութեան, գրողը էին ի միջի այլոց և մի քանի այնպիսի մարդիկ, որոնց մասին բարի է լիզ ունի եր պատմում են, որ երբեք առածը չեն աւելի, և որոնց մի կողմէ չէ կարելի հաւատալ:

— Ով մի երաշխաւորութեան, առանց երաշխաւորութեան, կրկնում էին ուրիշների հայտնի տարրողները, — բայց միշտ աչքերը ներքեւ դրած... Ժողովը լռում էր և ժպտում:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՍԱՑԻՆ ԳՈՐԱԿԱՒԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ, 10 հոկտեմբերի: Այսօր, առաւօտեան 10-ը ժամին, արտակարգ զնաքցով ժամանեց այստեղ Հէսէնի Ալիսա պրինցուհին: Կայսարանում Նորին Բարձրութեանը զիմաւորեցին զինուորական և քաղաքացիական բարձր իշխանութիւնները և ժողովրդի առաջին բազմութիւնը Վաղաքաղաքը արծաթէ ափսէի վրա մատուցեց պրինցուհուն արուհաց: Նախնորի գլխաւորի անուհինը Լազարեյա, և ուրիշ ափսէները մատուցին թարմ ծաղիկներից շքեղ վիջեր: Սիմֆերոպոլից պրինցուհին, զանազանութեան և բարձր յարգանքներով, կառքով դնաց Լիվադիա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 հոկտեմբերի: Բիւլլետէն հոկտեմբերի 10-ին 8 ժամ 16 րոպէին: Հոկտեմբերի 9-ի գիշերը թագաւոր Կայսրը ննջում էր ընկմիջոցներով ժամ 5 ժամ. Նորին Մեծութիւնը վեր էր կենում սովորութեան համեմատ. անորժակը մի փոքր աւելի պակաս է. ոչժերը չաւելացան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 հոկտեմբերի: Բիւլլետէն հոկտեմբերի 11-ին առաւօտեան 10 ժամին: Հոկտեմբերի 10-ի գիշերը թագաւոր Կայսրը աւելի լաւ էր քնում, անորժակը քիչ է. ոչժերի և սրտի գործունէութեան զուտեմբերը աւելի լաւ չէ. ոտների ուռելը մի փոքր աւելացաւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 հոկտեմբերի: Թագաւորանոց Յետաբնիւր Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչի հետ զիմաւորեցին Մեծ Հարսնայտեան Առաջուում: Սիմֆերոպոլից Օդոտտափառ Անձինքը դնացին Եւաթա բաց կառքերով: Խոնդրին Սիմֆերոպոլից մինչև Եւաթա շատ տեղերում շքեղ կերպով դարդարված է կամարներով կանաչուց, մասնաւոր գեղեցիկ էր մուտքը Եւաթայում: 6-ը ժամին Օդոտտափառ Անձինքը անցան Եւաթայով, Թագաւորանոց Յետաբնիւրը առանձին կառքում նրատաւ էր Հարսնայտեան հետ: Փողոցներում լցված ժողովուրդը ողջունում էր ուրախ բարձրացի, եղանակը գեղեցիկ էր, 200 է տարութիւնը: Լիվադիա հասնելուց յետոյ պրինցուհին ուղղակի դնաց Փոքր պալատը Նոյա կայսրական Մեծութիւնների մօտ, որտեղից թագուհու և կայսրական ընտանիքի ուրիշ անդամների հետ միասին դիմեց պալատական եկեղեցին, ուր մաղթանք կատարվեց: Սլիտայի անձինքը զիմաւորեցին Նորին Բարձրութեանը եկեղեցու մուտքի մօտ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 հոկտեմբերի: Ալիսա պրինցուհին պատասխանեց Մոսկովայի նահանգապետի շնորհաւորութեանը հետեւեալ հեռագրով Ալեքսանդրովից. «Խորին կերպով զգայված եմ, որ Մոսկովան ինձ յիշեց ինձ համար նոր, բայց վաղուց արդէն ինձ սիրելի հայրենիքի հողի վրա ու գնելու րօպէլին: Քոյոյ և ես ի սրտէ շնորհակալութիւն ենք յայտնում հին մայրաքաղաքին և չենք կասկածում նրա աղօթքների ջերմութեանը՝ մեր սիրելեղ թագաւորի անողջութեան համար, թող Աստուած օրէ՛ մեզ»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 հոկտեմբերի: Բիւլլետէն հոկտեմբերի 11-ին, երկուցեան 7 ժամին: Օրվա ընթացքում թագաւոր Կայսրի մօտ նկատվում էր

մի փոքր քնածածկալ գրուժիւն և թեթեւ ջղաճգական երեօթներ. անորժակը երեկվանից աւելի լաւ է:
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 հոկտեմբերի: Բիւլլետէն հոկտեմբերի 12-ին առաւօտեան 10 ժամին: Գիշերը թագաւոր Կայսրը քնեց մի քանի ժամ. ընկուտութիւնը նկատելի չէ. անորժակ կայ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐԱՍ

| | |
|---|---------------------|
| Հոկտեմբերի 11-ին | |
| Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . . | 93 ր. — 4. |
| Բերլինի վրա 100 մարկ . . . | 45 ր. 62 > |
| Պարիզի վրա 100 ֆրանկ . . . | 36 > 90 > |
| Ռակի . . . | արծէ . . . 7 > 51 > |
| Մաքսային կուպոններ . . . | 150 > 25 > |
| Արծաթ . . . | — > — > |
| Օրբային դիւլիօտ . . . | 5 > 7 > |
| Երա. բանկի 5% տօմս 1 շրջանի . . . | — > — > |
| — — — 2-րդ . . . | — > — > |
| — — — 3-րդ . . . | — > — > |
| 4% պետական րէնտա . . . | 93 7/8 > — > |
| 5% ոսկեայ րէնտա 1884 թ. . . | 160 > — > |
| 4 1/2 ոսկեայ փոխառութիւն . . . | — > — > |
| Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. . . | — > — > |
| — — — 2-րդ . . . | — > — > |
| — — — 3-րդ . . . | — > — > |
| Ներքին 5% առաջին փոխառութ. . . | 238 > — > |
| — — — երկրորդ . . . | 218 > — > |
| Պետական կրթութեղային րէնտա . . . | — > — > |
| 4 1/2 րէնտա . . . | — > — > |
| 4% ներքին փոխառութիւն . . . | 96 > — > |
| 5% դրա. թղթ. ազն. կալ. բանկի . . . | — > — > |
| Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. . . | — > — > |
| Գրաւ. թղթ. . . | 193 > — > |
| 4 1/2% վիսյակ. դիւլ. հող. բանկի . . . | — > — > |
| 4 1/2% դրաւական թղթեր կալուած . . . | — > — > |
| — — — փոխ. կրեղիտ. ընկեր. մուտ. 153 3/8 . . . | — > — > |
| — — — թղթար. . . | — > — > |
| Պետերբուրգի քաղաքային կրեղիտ. ընկերութեան օրկիւպայիտներ . . . | 100 > 25 > |
| Մոսկովայի քաղաք. օրկիւպայիտներ . . . | 100 > 25 > |
| Օղէսայի . . . | 100 > 25 > |
| Թիֆլիսի . . . | 99 > — > |
| Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի . . . | 100 > — > |
| — — — Գուժայի . . . | 100 > — > |
| Ս. Պետերբուրգի բօրայի արամադրութիւնը խաղաղ է: | |

Խաղաղի՝ ԱԼԷԲՍԱՆԴՐԻ ԳԱՒԱՆՔԱՐ Հրատարակիչ Մ. ՄԵՂԻՔ-ԱՂԱՄԱՆՅԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍՒՒ «ՄՐԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆԻ ԵՐԵՄՆԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆԸ» ԳԻՐԸ

Յ ո բ է ւ ա ր ի ե ր կ ու պ ա ա կ ե ր ո Վ :
Խմբագրեց Ա. Ծատուրեան, Հրատարակ. Յ. Տէր-Յակոբեանի Գ ի ն ն է մ է կ ր ու բ լ ի :
Վաճառվում է յօդու ապագայ ՆՇահազիզեան գրականական Փօնդի: Յանկացողները դիմում են Հրատարակչին՝ Москва, Верхние Торговые Ряды, контора И. Н. Терп-Акопова, №№ 222—223, կամ Баку, контора И. Н. Терп-Акопова. (№ 116) 3—5

ՀՆՈՒԱՅՈՍ № 104 ՀՆՈՒԱՅՈՍ № 104

Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

որը բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թ-ին ՈՍԿԵ ՄԵՂԱԼԻ—ԱՆՈՎԵՐԱՅԻՆԻ, և ԲՐԹՁՐ ՊԱՏԱՌՈՐ ՊԱՐԳԵՆԵՐԻ—ԼԻՕՆԻ ցուցահանդէսներում
Առաջարկում է նոր պատրաստած Ը Ն Տ Ի Ր Պ Ա Պ Ի Ր Օ Ս Ն Ե Ր
«Капризъ» 25 Հատը 15 կոպ.
«Рекомендаціонныя» } 10 Հատը 5 կոպ.
«Театральныя» }
«Флора» }
«Экономныя» 10 Հատը 3 կոպ.
Կարելի է առնել գործարանից և իսկական ծխախոտավաճառների մօտ: Ուղարկելու ծախար գործարանի վրա է: (№ 104) 0—5

Դ Պ Ր Ո Ց Ծ Ր Ի Ո Ր Դ Մ Ի Ա Ս Լ Ա Մ Ա Ջ Ե Ա Ն Ի

(Աւարտած կանանց բարձրագոյն կուրսերում)
Սոլոլակի, Նագորնայա փողոց, Բախչէվսկայի փողոցի անկիւնում, տուն Շամկաւրովի № 25.
Կովկասեան ուսումնարանական շրջանի պ. Հոգարարձու թղթատրութեամբ, այս տարվայ սեպտեմբերի 15-ից բացվում է 3-րդ կարգի մասնաւոր դպրոց: Գպրոցն ընդունվում են երկու սեռի պատկանող մանուկներ՝ նրանց պատրաստելու կառավարչական միջնակարգ դպրոցները մանկու համար (№ 105) 8—10